ԿՐԹԱԿԱՆ

# ԴՊՐՈՑՆԵՐՆ ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ԱՌԱՋԻՆԻՑ ՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԻՆ



***Ինչպես արդեն հաղորդել ենք, սեպտեմբերի 15-ին, Վրաստանի տարածքում, բացառությամբ ութ խոշոր քաղաքների, մեկնարկեց նոր ուսումնական տարին: Խոշոր քաղաքներում ուսումը սկսվեց հեռավար: Արդեն հոկտեմբերի 1-ից Թբիլիսիի, Քութայիսիի, Ռուսթավիի եւ Զուգդիդիի հանրային դպրոցները դռները բացեցին առաջինից մինչեւ վեցերորդ դասարանցիների համար, իսկ Փոթիում եւ Գորիում՝ բոլոր դասարանների աշակերտների համար:***

Ինչպես հայտարարեց Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Միխեիլ Չխենկելին, հոկտեմբերի 1-ից այն դպրոցներում, որտեղ ուսման գործընթացն ընթանում էր հեռավար կարգով, առաջինից վեցերորդ դասարանի աշակերտները կվերադառնան դասասենյակներ:

- Սա չի վերաբերում Աջարիային: Եթե աշակերտների ծնողները որոշեն, որ նախընտրում են իրենց երեխաները ուսումը շարունակեն հեռավար կարգով, ապա դա ամբողջությամբ կապահովվի: Իսկ ինչ վերաբերում է բարձր դասարաններին, յոթերրորդից տասներկուերրորդ դասարանների աշակերտներին, հետագայում մենք հայտարարություն կանենք այդ կապակցությամբ,- ասաց Միխեիլ Չխենկելին:

Ինչ վերաբերում է մանկապարտեզների գործունեությանը, ապա, նախարարի խոսքով, մանկապարտեզները, բացառությամբ Աջարիայի տարածաշրջանի, իրենց աշխատանքը կվերսկսեն հոկտեմբերի 12-ից:

Միաժամանակ, Միխեիլ Չխենկելին կարեւորեց սահմանված հանձնարարականների պաշտպանության անհրաժեշտությունը:

- Ես մեկ անգամ եւս ցանկանում եմ կոչ անել հասարակությանը, շատ կարեւոր է, որ բոլորը խստորեն հետեւեն առողջապահության ոլորտի հանձնարարականներին: Մեր երեխաներին, դպրոցականներին, ուսանողներին եւ մասնագիտական ուսումնարանների ուսանողներին հնարավորություն տանք ուսումը շարունակել դասասենյակներում եւ լսարաններում,- ասաց նախարարը:

# ՇԱՀՈՒՄՅԱՆ ԱՎԱՆԻ ԴՊՐՈՑԸ 99-ՐԴ ԱՆԳԱՄ ԲԱՑԵՑ ԻՐ ՀՅՈՒՐԸՆԿԱԼ ԴՌՆԵՐԸ



***Մառնեուլիի մունիցիպալիտետի Շահումյան ավանի թիվ 1 հանրային դպրոցն արդեն շուրջ մեկ դար է իր դռներն է բացում բազում սերունդների առջեւ: Կրթօջախը բացվել է 1921 թվականին, սկզբում՝ որպես տարրական, իսկ 1923 թ.՝ արդեն որպես միջնակարգ դպրոց:***

Դպրոցը շատ ու շատ նշանավոր մարդիկ են ավարտել, այդ թվում անվանի բանաստեղծուհի Մարո Մարգարյանը, նրա եղբայրը՝ նշանավոր աստղագետ Բենիամին Մարգարյանը, Հայաստանի նախկին դատախազ՝ Ժիրայր Խառատյանը եւ ուրիշներ:

Այժմ էլ դպրոցի շրջանավարտները սովորում են բազմաթիվ բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ ե՛ւ Վրաստանում, ե՛ւ Հայաստանում:

Ինչպեսեւ բոլոր դպրոցներում այս ուսումնական գործընթացն սկսեց ավելի պատասխանատու պայմանավորված համավարակով: Սակայն, մենք առաջնորդվում ենք՝ «Ուժը միասնության մեջ է» նշանաբանով, ուստի, մենք համոզված ենք, որ կարող ենք բարեհաջող դիմակայել մեր առջեւ ծառացած մարտահրավերներին: Դպրոցի որոշ դասարաններ, ուր աշակերտների թիվը չի համապատասխանում համավարակից բխող պայմաններին, կիսվում են, ինչն էլ առաջացնում է լրացուցիչ դասաժամեր: Մեր ուսուցիչներն անտրտունջ ու անվճար պարապում են լրացուցիչ դասաժամերը: Ինչի համար էլ ես՝ որպես տնօրեն իմ շնորհակալությունն եմ հայտնում նրանց:

***ԱՐՏՈՒՇ ՈՒՐՈՒՄՅԱՆ***
***Շահումյան ավանի թիվ 1 հանրային դպրոցի տնօրեն***

# ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԿԻՐԱԿԱՆԱՑՎԻ, ԵԼՆԵԼՈՎ 13 ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻՑ

***Սոցիալական ծրագրի շրջանակներում, ուսանողներին պետական ուսումնական դրամաշնորհներով ֆինանսավորելու նպատակով, սկսվել է դիմումների ընդունումը բակալավրիատի, ուսուցիչների նախապատրաստման, ինտեգրված բակալավրիատի-մագիստրոսի, անասնաբույժի ինտեգրված մագիստրոսի, դիպլոմավոր բժիշկ-ատամնաբույժի հավաստագրված կրթական ծրագրերում:***

Ծրագիրը նախատեսում է Միասնական ազգային քննությունների արդյունքներով ընդունված 13 կատեգորիայի ուսանողների պետական ուսումնական դրամաշնորհով ֆինանսավորման կարգը: Մասնավորապես, դրամաշնորհ կտրվի բարձրալեռ բնակավայրերի կարգավիճակ ունեցող դպրոցների շրջանավարտներին, բռնազավթված տարածաշրջանների ուսանողներին, հայալեզու եւ ադրբեջանալեզու դպրոցների շրջանավարտներին, երկրի տարածքային ամբողջականության համար զոհվածների զավակներին, հստակորեն արտահայտված սահմանափակ հնարավորություններ ունեցող վետերաններին կամ նրանց զավակներին, որբ (ծնողազուրկ) ուսանողներին, բազմազավակ (չորս եւ ավելի երեխա) ընտանիքների անդամներին, պետության խնամքի տակ գտնվող ուսանողներին, վտարանդիի կարգավիճակ եւ սահմանափակ հնարավորություն ունեցող ուսանողներին, աուտիզմով տառապող անձանց, բռնազավթված տարածքի բաժանարար գոտու հարակից գյուղերի շրջանավարտներին, սոցիալապես կարիքավոր ուսանողներին (որի ընտանիքի վարկանիշային միավորը 70 հազար է կամ ավելի քիչ):

Սոցիալական ծրագրի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ֆինանսավորման ենթակա ուսանողների կատեգորիաների եւ կատեգորիային պատկանելությունը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերի մասին տեղեկատվությունը կարելի է ստանալ նախարարության պաշտոնական կայք-էջից՝ https://www.mes.gov.ge/content.php?id=4231&lang=geo:




ԻՐԱՎԱԿԱՆ

# ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԻ ՄԻ ՄԱՍԸ ՕՏԱՐ ԵՐԿՐԻՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՓԱՍՏՈՎ

***Սեպտեմբերի 29-ին Վրաստանի գլխավոր դատախազությունը սկսեց հետաքննել Վրաստանի տարածքի մի մասը օտարերկրյա պետությանը փոխանցելու գործողություններ ձեռնարկելու փաստը:***

Վրաստանի գլխավոր դատախազության հայտարարության մեջ նշված է, որ պաշտպանության նախարարության կողմից ստացված տեղեկությամբ, հանձնաժողովի կողմից Վրաստան-Ադրբեջան պետական սահմանի սահմանազատման գործողությունն իրականացվել է ի վնաս Վրաստանի տարածքային հետաքրքրությունների:

«Վրաստանի գլխավոր դատախազության քննչական բաժնում քննվում է քրեական գործ, օտար երկրի համար Վրաստանի տարածքի մի մասի փոխանցման դեմ իրականացրած փաստով, Վրաստանի քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված հանցագործության հիմքով:

Հետաքննությունը սկսվել է 2020 թվականի օգոստոսի 17-ին, Վրաստանի պաշտպանության նախարարությունից ստացված գրավոր տեղեկատվության հիման վրա, որը վերաբերում էր Վրաստանի պետական սահմանների սահմանազատման եւ սահմանագծման հանձնաժողովի գործունեությանը: Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկատվության համաձայն, հանձնաժողովը ապօրինի համաձայնեցրել է Ադրբեջանի ու Վրաստանի միջեւ պետական սահմանի որոշ հատվածներ՝ ի վնաս մեր երկրի տարածքային շահերի:

Այս փուլում հետաքննությունը, ի թիվս այլ հարցերի, ուսումնասիրում է վրաց-ադրբեջանական պետական սահմանի սահմանազատման մեջ ներգրավված Վրաստանի կառավարության հանձնաժողովի առանձին փորձագետների գործողությունների օրինականությունը:

Ընթացիկ տարվա սեպտեմբերի 9-ին, Լեւան Սամխարաուլու անվան դատաբժշկական փորձաքննության ազգային բյուրոյում նշանակվել է քարտեզագրական փորձաքննություն, որին մասնակցում էին ակադեմիկոսներ եւ գեոդեզիայի ու քարտեզագրության ոլորտի առաջատար մասնագետներ: Քրեական գործով հարցաքննվել են տասնյակ մարդիկ:

Հաշվի առնելով բարձր հանրային հետաքրքրությունը՝ Վրաստանի դատախազությունը պարբերաբար կտեղեկացնի հասարակությանը հետաքննության արդյունքների մասին»,- ասված է հայտարարության մեջ:

Նշենք, որ օրերս Վրաստանի արտգործնախարար Դավիթ Զալկալիանին Թբիլիսիում պաշտոնական այցով գտնվող իր ադրբեջանցի գործընկերոջը տեղեկացրել էր, որ ի հայտ են եկել Դավիթ Գարեջիի վանական համալիրին վերաբերող նոր նյութեր ու փաստաթղթեր, ինչի հետ կապված՝ հնարավոր է 2006-2007 թվականներին ձեռք բերված համաձայնության վերանայում պահանջվի:

Հիշեցնենք՝ վերջին տարիներին պետական սահմանի չհստակեցված հատվածները լարվածություն են առաջացրել վրաց-ադրբեջանական սահմանին գտնվող Դավիթ Գարեջի 6-րդ դարի վանական համալիրի շուրջ: Վանական համալիրում բազմիցս միջադեպեր են գրանցվել վրացի ու ադրբեջանցի սահմանապահների միջեւ, բողոքի ակցիաներ են անցկացվել: Իրավիճակը լարվել էր հատկապես այն բանից հետո, երբ Ադրբեջանը փակել էր համալիր տանող մուտքը:

***ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ***

COVID 19

# ԱՄԻՐԱՆ ԳԱՄԿՐԵԼԻՁԵ. «ՊԵՏՔ Է ՀԱՍԿԱՆԱԼ, ՈՐ ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ ՈՐՈՇ ԺԱՄԱՆԱԿ ԿՏԱՏԱՆՎԻ 200-500-Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ, ԳԼԽԱՎՈՐԸ՝ ԴԱ ԼԻՆԻ ՎԵՐԱՀՍԿԵԼԻ»



*Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամղրելիձեի հայտարարությամբ, կորոնավիրուսի հաստատված դեպքերի քանակի ավելացման ֆոնին Վրաստանում մահացածների թիվն ամենացածրերից մեկն է Եվրոպայում: Ըստ նրա՝ դեպքերի թվի աճ սպասվում էր, հատկապես Աջարիայում:*

Ըստ Ամիրան Գամղրելիձեի՝ նոր դեպքերի թիվը պարբերաբար կլինի 200-ից 500, բայց ամենակարեւորը՝ դա լինի կառավարելի: Ամիրան Գամղրելիձեի խոսքով, այս պահին իրավիճակը լիովին վերահսկվում է, եւ հիվանդներին ցուցաբերվում է համապատասխան օգնություն:

- Ցավոք, ունենք 31 մահացած: Երկրում մահացության ընդհանուր տոկոսը կազմում է 0,56, դա Եվրոպայում ամենացածր ցուցանիշներից մեկն է: Չնայած, դա կանխատեսելի էր, որ սեպտեմբերին կավելանար վարակման դեպքերը եւ կավելանային միջին եւ ծանր, այդ թվում՝ ծայրահեղ ծանր հիվանդների քանակը: Յուրաքանչյուր զոհի մեծ դժբախտություն է, սակայն, ցավոք, բժշկության մեջ լինում են նման դեպքեր: Սակայն այդ մահացությունների ֆոնին Վրաստանը Եվրոպայում ունի լավագույն ցուցանիշներից մեկը: Դեռեւս Աջարիան մնում է թեժ կետ: Այնտեղ կենտրոնացված է վարակման մեծ քանակ, մոտավորապես 60-ից 75 տոկոս: Այսօրվա դրությամբ, Աջարիայի հիվանդանոցներում բուժվում է 502, իսկ կովիդ հյուրանոցներում՝ 998 մարդ: Բնակարաններում բուժվում է մոտ 600 մարդ: Մենք կանխատեսում էինք, որ ամառվա սեզոնին կունենայինք դեպքերի աճ: Նոր դեպքերի թիվը պարբերաբար կլինի 200-ից 500, բայց ամենակարեւորը՝ դա կառավարելի լինի: Այս պահին իրավիճակը լիովին վերահսկվում է, եւ հիվանդներին ցուցաբերվում է համապատասխան օգնություն,- հայտարարել է Ամիրան Գամղրելիձեն:

Նրա խոսքով, Վրաստանն անցել է այն մոդելին, երբ ակտիվորեն միանում է առաջնային առողջապահությունը, տեղի է ունենում թեթեւ եւ ասիմպտոմ բուժառուների տնային պայմաններում բուժումը:

# ՎՐԱՍՏԱՆՆ ԱՆՑՆՈՒՄ Է «ԿԱՐՄԻ՞Ր ԳՈՏԻ»

Ինչպես տեղեկացրել է վրացական «Ռեզոնանսի» թերթը, վերջին օրերին Վրաստանում կորոնավիրուսով վարակվածների կտրուկ աճի կապակցությամբ, ամենայն հավանականությամբ, Վրաստանը կանցնի, այսպես կոչված, «կարմիր »գոտի: Նշենք, որ դեռեւս սեպտեմբերի 10-ին Վրաստանի առողջապահության փոխնախարար Թամար Գաբունիան հայտարարել էր, որ երկիրը միջազգային վարկանիշով գտնվում է «կանաչ» եւ «միջանկյալ» գոտու միջեւ: Մասնագետների գնահատմամբ, այսօրվա դրությամբ, Վրաստանն արդեն գտնվում է «դեղին» գոտում եւ ընդհուպ մոտեցել է «կարմրին»:

# ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ՏԱԳՆԱՊԱԼԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ




*Աշխարհում COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն անցել է 34,517 միլիոնը: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 1 028 196 հազարը: Ապաքինվել է 25 միլիոն 688 772 մարդ:*

Վիրուսով վարակվածների թվով աշխարհում առաջին տեղում է գտնվում **ԱՄՆ-ը,** որտեղ հաստատված **7 494 671** դեպք կա: Այստեղ մահացածների թիվը **212 660** է: Երկրորդ տեղում **Հնդկաստանն է**, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է **6 397 896-ի**, մահացածներինը՝ **99 833-ի:**

Վարակվածների թվով հաջորդ տեղում **Բրազիլիան է**, որտեղ վարակվել է **4 849 229**, մահացել՝ **144 767** մարդ: **Ռուսաստանում** կորոնավիրուսով վարակվել է **1 194 643**, վարակի հետեւանքով մահացել՝ **21 077** մարդ:

**Կոլումբիայում** վարակվել է **835 339**, վարակի հետեւանքով մահացել՝ **26 196** մարդ: **Պերուում** վարակվել է **818 297**, վարակի հետեւանքով մահացել՝ **32 535** մարդ: Պերուին հաջորդում են Իսպանիան, Արգենտինան, Մեքսիկան եւ Հարավային Աֆրիկան:

**Հայաստանում**, ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է **51 382**-ի, մահացածներինը՝ **966**-ի, ապաքինվածներինը՝ **44 406**-ի:

**Ադրբեջանում** վարակվածների թիվը կազմում է **40 309** մարդ: Վարակից մահացել է **593**, ապաքինվել՝ **38 068** մարդ:

Հոկտեմբերի 25-ի տվյալներով, **Վրաստանում** վարակվել է **7 093,** մահացել՝ **46**, ապաքինվել՝ **3 714** մարդ:

# COVID-19-Ի ԲՈՒԺՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

## ՎՐԱՍՏԱՆԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԸ

*Վրաստանի առողջապահության նախարարությունը հաստատել է մեկուսացված հիվանդների բժշկական վերահսկողության ալգորիթմը, որոնց մոտ կորոնավիրուսն ունի մեղմ ընթացք:*

Սույն ուղեցույցի համաձայն, կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ՊՇՌ (PCR) թեստով հաստատելու դեպքում հիվանդը ենթակա է բուժհսկողության տանը՝ կա՛մ կարանտինային տարածքում, կա՛մ տեղափոխվում է հիվանդանոց՝ համաձայն հետեւյալ սխեմայի.

Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշումից անմիջապես հետո՝ Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնը տեղեկատվություն է փոխանցում «112» ծառայությանը, որը, հիվանդի նախնական կլինիկական գնահատման նպատակով, զանգը ուղղորդում է ամբուլատոր հաստատություններ (առցանց կլինիկաներ):

Հեռախոսային խորհրդատվության հիման վրա առցանց կլինիկայի բժիշկը սահմանում է վարակակրի անամնեզը, գնահատում նրա վիճակը, որից հետո որոշում է կայացվում՝ հիվանդին ուղարկել հատուկ հատկացված մեկուսացման սենյակ (հյուրանոցում), թե նա պետք է տեղափոխվի բժշկական հաստատություն:

Նախնական կլինիկական գնահատումից հետո, եթե մեղմ հիվանդության ընթացք ունեցող հիվանդ է, եթե հիվանդը կարող է խնամվել համապատասխան մեկուսացված միջավայրում եւ ընտանիքի կամ հարազատների կողմից՝ վարակը կանխելու համար վերահսկելու համապատասխան միջոցառումները վերահսկվում են, կարող է որոշում կայացվել հիվանդին թողնել տանը՝ կորոնավիրուսային հիվանդության մեղմ ընթացքով հիվանդներին տան պայմաններում բուժման՝ առողջապահության նախարարության կողմից հաստատված ուղեցույցով սահմանված կանոնների պահպանմամբ:

Տանը անհրաժեշտ պայմանների բացակայության դեպքում՝ հիվանդները տեղափոխվում են կարանտինային գոտի (հյուրանոց):

Եթե հիվանդությունը մեղմ ընթացք չունի, ապա հիվանդներին ուղղորդում են բժշկական հաստատություն: Այնուամենայնիվ, նախնական ստացիոնար բուժումից հետո բուժառուները (պացիենտներ), որոնց մոտ կորոնավիրուսը մեղմ ընթացքով է, տեղափոխվում են կարանտինային հյուրանոց՝ բժշկական հսկողության ներքո եւ մեկուսացված պայմաններում բուժումն ավարտելու նպատակով:

Հիվանդանոցային (ստացիոնար) նախնական բուժումը ներառում է կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) բուժման ուղեցույցով (guideline) առաջարկվող հետազոտությունների շարք, որոնք պետք է իրականացվեն հիվանդի վիճակը մանրակրկիտ գնահատելու նպատակով: Սա հնարավորություն կտա սկզբիցեւեթ գնահատել ակնկալվող ռիսկերը եւ գործել ըստ այդմ:

Խորհուրդ չի տրվում թողնել տանը կամ կարանտինային տարածքներում հետեւյալ բուժառուներին.

Ցանկացած քրոնիկ հիվանդություններով անձանց (հիպերտոնիա, շաքարախտ, սիրտ-անոթային հիվանդություն, սրտի անբավարարություն, թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդություն (ԹՔՕՀ) եւ բրոնխային ասթմա եւ այլն),

15 տարեկանից ցածր եւ 65 տարեկանից բարձր քաղաքացիներին:

Եթե կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) վարակված բուժառուներին կարանտինային գոտում բուժելու կամ վերահսկելու որոշում կայացվի, ապա այդ ժամանակ հիվանդի վիճակը վերահսկում են կարանտինային հյուրանոցում գտնվող բժշկական անձնախմբերը (բժիշկ, բուժքույր), որոնք նույնպես սերտ շփման մեջ են գտնվում:

Կարանտինային գոտում 20 հիվանդի համար մեկ բրիգադ է հատկացվելու, որում ընդգրկված են մեկ բժիշկ եւ բուժքույրեր: Հիվանդների թիվն ավելանալուն պես, յուրաքանչյուր լրացուցիչ 30 բուժառուի դեպքում ավելանում է եւս մեկ բուժքույր, իսկ երկու լրիվ բրիգադ է ավելանում, եթե հիվանդների թիվը գերազանցում է 50-ը:

Եթե տանը կամ կարանտինային գոտում բուժվող հիվանդի վիճակը վատթարանում է, ապա հիվանդը ենթակա է հոսպիտալացման (ներառյալ՝ կրկին անգամ):

Կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) վարակված բուժառուները, որոնք տեղակայված են մեկուսացված տարածքում (հյուրանոցում), դուրս կգրվեն առողջապահության նախարարության կողմից հաստատված ուղեցույցով սահմանված կանոնների պահպանմամբ:

Բժիշկների համար նույնպես մշակվել են հրահանգականներ վարակված հիվանդների փաստաթղթային գրառումները վարելու վերաբերյալ: Օրինակ, հիվանդների հիվանդության պատմությունները (անամնեզ) հինգ տարի կպահվեն Հիվանդությունների վերահսկման եւ հանրային առողջության ազգային կենտրոնի արխիվում:

Ուղեցույցի ամբողջական տեքստին կարող եք ծանոթանալ Վրաստանի առողջապահության նախարարության կայք-էջում:

*ՍԻՄՈՆ ԿԻԼԱՁԵ*

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

# ԱՌԱՆՑ ԵՐԱՇԽԻՔԻ ԲԱՆԿԸ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՄԻՆՉԵՎ 250 ՀԱԶԱՐ ԼԱՐԻԻ ՎԱՐԿ

*Առաջին անգամ Վրաստանում գործարարության աջակցության եւ նրա գործունեության դյուրացման նպատակով, TBC բանկում հնարավորություն է ստեղծվել ստանալ մինչեւ 250 հազար լարիի վարկ, առանց գույքի եւ հիմնական շրջանառու միջոցների երաշխիքի:*




Վերոնշյալ առաջարկությունից օգտվելու համար, գործարարները պետք է լրացնեն օնլայն դիմումը, որից հետո կապվեն TBC բանկի հետ: Բանկի մարման ժամկետները եւ տոկոսադրույքը անհատական են, եւ սահմանվում են բիզնեսի ֆինանսական վիճակից ու կարիքներից ելնելով:

- Վրաստանում եւ, ընդհանրապես, աշխարհում ստեղծված իրավիճակից ելնելով, գործարարներին անհրաժեշտ են ֆինանսական ռեսուրսներ ինչպես գործունեության շարունակության, այնպես էլ՝ զարգացման համար: TBC-ի առաքելությունն է դյուրացնել իրենց սպասարկումներից օգտվողների կյանքը, ուստի մշտապես գործում է նրանց կարիքների համար անհրաժեշտ արտադրանքի առաջարկության ուղղությամբ եւ սպասարկումների մատուցման գործընթացների դյուրացման տեսանկյունից: Մինչ օրս, Վրաստանում առանց երաշխիքի բիզնեսվարկի լիմիտը կազմում էր 50 հազար լարի: Մենք այդ շեմը բարձրացնում-հասցնում ենք 250 հազարի: Համոզված ենք, որ ֆինանսական նոր ռեսուրսի ի հայտ գալը, շուկայում դրական ազդեցություն կգործի եւ գործարարներին հնարավորություն կընձեռի առկա մարտահրավերների ֆոնի վրա հաջողությամբ շարունակել գործունեությունը,- հայտարարեց TBC բանկի գլխավոր տնօրենի տեղակալ Նիկա Քուրդիանին:

Մինչեւ 250 հազար լարի բիզնես վարկի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը, ինչպես նաեւ համապատասխան դիմումի լրացնելը, հնարավոր է TBC բանկի կայք-էջում:

Շահագրգռված անձինք մանրամասները կարող են ստանալ՝ զանգելով TBC բանկի թեժ գիծ կամ՝ այցելել Վրաստանի տարածքով բանկի ցանկացած մասնաճյուղ:

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՇՈՐ ՀԱՂԹԱՆԱԿԸ

### ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ ԷԼ ԱՐԴԵՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՁԿԱՆՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՓԱՍՏԸ

*Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանն արձանագրեց հայկական դիվանագիտության խոշոր հաղթանակը:*



- Վերջապես մեր դիվանագիտությունը խոշոր հաղթանակ տարավ: Միջազգային հանրությունը հստակ արձանագրեց, որ ադրբեջանաթուրքական տանդեմը Արցախի ու Հայաստանի դեմ կռվում է վարձկան-ահաբեկիչների օգնությամբ: Այսպիսով՝ արցախյան առաջնագիծը դառնում է քաղաքակրթական առաջնագիծ: Արցախը կռվում է միջազգային ահաբեկչության դեմ, որի թիրախները տարանջատված չեն աշխարհաքաղաքական սահմաններով:

Այդ ահաբեկչությունը հավասարաբար սպառնում է ԱՄՆ-ին ու Իրանին, Ռուսաստանին ու Ֆրանսիային եւ Արցախը, Հայաստանը, հայ ժողովուրդը կռվում են հանուն գլոբալ անվտանգության,- նշել է Նիկոլ Փաշինյանը:

Հոկտեմբերի 1-ին Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը հայտնեց, որ փաստեր ունի, որ Լեռնային Ղարաբաղի մարտական գործողություններին Թուրքիայից սիրիական իսլամիստներ են մասնակցում:

Նույնի հավաստմամբ հանդես է եկել նաեւ Ամերիկայի Միացյալ Նահանգների Պաշտպանության նախարարության ներկայացուցիչը:

Համաձայն միջազգային լրատվամիջոցներում անընդհատ պտտվող տեղեկությունների Թուրքիան Սիրիայի հյուսիսային հատվածից Ադրբեջան է տեղափոխել զինվորական վարձկանների՝ Արցախի ու Հայաստանի դեմ օգտագործելու նպատակով: ոսքը 3,000-4,000 վարձկանների մասին է, որոնք ըստ այդ նույն աղբյուրների Արցախի ու Հայաստանի դեմ այս օրերին ընթացող պատերազմին մասնակցելու համար վճարվել են 1500-2000 ԱՄՆ դոլար:

## ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ Է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

*«Սա արդեն պարզապես Ղարաբաղի հարց չէ, սա այլեւս միջազգային անվտանգության հարց է, եւ հայ ժողովուրդը պաշտպանում է նաեւ միջազգային անվտանգությունը»,- այս մասին «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի իր էջում նշել է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը:*

- Ինչու է Թուրքիան 100 տարի անց վերադարձել Հարավային Կովկաս. շարունակելու հայոց ցեղասպանությո՞ւնը: Բայց ցեղասպան քաղաքականության շարունակությունը Թուրքիայի համար միայն հայատյացությունը իրացնելու միջոց չէ, այլեւ պրագմատիկ խնդիր: Հայաստանն ու Հարավային Կովկասի հայությունը վերջին խոչընդոտն են թուրքական էքսպանսիան դեպի հյուսիս, դեպի հարավ-արեւելք եւ դեպի արեւելք շարունակելու եւ կայսերական երազանքը կյանքի կոչելու համար: Սա արդեն պարզապես Ղարաբաղի հարց չէ, սա միայն հայ ժողովրդի անվտանգության հարց չէ: Սա այլեւս միջազգային անվտանգության հարց է, եւ հայ ժողովուրդը պաշտպանում է նաեւ միջազգային անվտանգությունը՝ ստանձնելով, թերեւս, մի նորագույն պատմական առաքելություն,- նշել է Հայաստանի վարչապետը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ ՉԻ ԲԱՑԱՌՎՈՒՄ

*- Երեւանը չի բացառում Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչումը,- այս մասին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց սեպտեմբերի 27-ին Հայաստանի Ազգային ժողովում:*

- Մենք այս հարցը պետք է շատ լուրջ քննարկենք: Հնարավոր է սկսենք ավելի լայն հասարակական քննարկում, մենք կքննարկենք զարգացման բոլոր սցենարները: Այս հարցը կտեղափոխվի բանակցությունների սեղանին,- ասել է Փաշինյանը:

Բացի այդ, Հայաստանի վարչապետը այս խնդրի մասին գրել է նաեւ սոցիալական ցանցում:

«Մենք կքննարկենք իրադարձությունների զարգացման բոլոր սցենարները: Հայաստանը Արցախի անվտանգության եւ անկախության երաշխիքն է: Հայաստանն այսօր կանգնած է Արցախի կողքին, իր պետական համակարգի եւ բնակչության ամբողջ ներուժով: Մենք ջանք չենք խնայի մեր հայրենիքի սահմաններն ապահով դարձնելու, մեր ազատությունն ու անկախությունը պաշտպանելու համար»,- գրել է Փաշինյանը «թվիթերում»-ում:

## ԱՄՆ-Ը, ՖՐԱՆՍԻԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԿՈՉ ԵՆ ԱՆՈՒՄ ԴԱԴԱՐԵՑՆԵԼ ԿՐԱԿԸ ԵՎ ՆՍՏԵԼ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ՍԵՂԱՆԻ ՇՈՒՐՋ

*ԱՄՆ-ը, Ֆրանսիան եւ Ռուսաստանը կոչ են անում դիմակայող կողմերին անհապաղ դադարեցնել կրակը Լեռնային Ղարաբաղում եւ վերսկսել երկխոսությունը:*

«Հակամարտող կողմերին կոչ ենք անում անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները: Մենք նաեւ կոչ ենք անում Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարներին անհապաղ վերսկսել առկա բանակցությունները, առանց նախապայմանի՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի հովանու ներքո»,- ասված է երեք առաջնորդների՝ Թրամփի, Մակրոնի եւ Պուտինի համատեղ հայտարարության մեջ:

Դրա հետ մեկտեղ, Ռուսաստանը, Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարներին, երկխոսության համար, առաջարկում է հանդիպել Ռուսաստանում:

## Ի ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ, ՄԱԿ-Ը ԼԻԱԿԱՏԱՐ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ Է ՑՈՒՑԱԲԵՐՈՒՄ ԵԱՀԿ ՄԻՆՍԿԻ ԽՄԲԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆԸ

*Սեպտեմբերի 30-ին, ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը, ԼՂ հակամարտության գոտում իրավիճակի սրման շուրջ տեղի ունեցած փակ քննարկման արդյունքով, հանդես է եկել հայտարարությամբ, որտեղ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամներն անհանգստություն են հայտնել ԼՂ հակամարտության գոտում շփման գծի երկայնքով լայնածավալ ռազմական գործողությունների մասին հաղորդումների առնչությամբ եւ վճռականորեն դատապարտում են ուժի գործադրումն ու ափսոսանք հայտնում մարդկային զոհերի ու քաղաքացիական բնակչության շրջանում զոհերի կապակցությամբ:*

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամները հայտարարել են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կենտրոնական դերակատարման լիակատար աջակցության մասին ու կոչ են արել կողմերին համագործակցել նրանց հետ՝ առանց նախապայմանների երկխոսության շուտափույթ վերսկսման համար:

Ի տարբերություն ՄԱԿ-ի միաձայն դիրքորոշման, Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրներին մեղադրել է անգործության մեջ:

Թուրքիայի նախագահն ի պատասխան տարբեր երկրների կոչերի, որ, որպես ԵԱՀԿ ՄԽ անդամ երկիր Թուրքիան պետք է զսպվածություն ցուցաբերի Արցախի հարցում, նշել է, թե այժմ ԼՂ հիմնախնդիրը պետք է մեկընդմիշտ լուծում ստանա եւ չպետք է համանախագահող երկրներն իրեն խորհուրդներ տան այդ հարցի վերաբերյալ:

«ԱՄՆ-ը, Ռուսաստանն ու Ֆրանսիան շուրջ 30 տարի չեն կարողացել լուծել այս խնդիրը: Իսկ հիմա նրանք բոլորը խորհուրդներ են տալիս»,- նշել է Էրդողանը:

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ՝ ԱՐՑԱԽԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՀԱՎԱՔԻ ԱԿՑԻԱՆ

*«Հայաստան» համահայկական հիմնադրամի՝ «Մենք ենք, մեր սահմանները. բոլորս Արցախի համար» խորագրով համազգային դրամահավաք-արշավի շրջանակում արդեն հավաքագրվել է ավելի քան 10 մլն 972 հազար ԱՄՆ դոլար:*

«Ընթացիկ տարվա սեպտեմբերի 27-ին Ադրբեջանն Արցախի շփման գծի ողջ երկայնքով ակտիվ հրետակոծություն է սկսել՝ թիրախավորելով նաեւ խաղաղ բնակավայրերը: «Հայաստան» համահայկական հիմնադրամը Արցախի կողքին է: Միասնական որոշում է կայացվել «Մենք ենք, մեր սահմանները. բոլորս Արցախի համար» խորագրով համազգային դրամահավաք-արշավ սկսել՝ աջակցելու Արցախում անուր կանգնած մեր քույրերին ու եղբայրներին: Այս պահի դրությամբ հավաքագրվել է ավելի քան 10,972,809 ԱՄՆ դոլար եւ շարունակում է զգալիորեն աճել: Մեր ժողովուրդն առավել քան երբեւէ համախմբված է եւ հաղթական»,- ասված է հաղորդագրությունում:

### ՓԱՍՏԵՐ ՎԵՑՕՐՅԱ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

***Արցախի հետ շփման գծի ողջ երկայնքով սեպտեմբերի 27-ի վաղ առավոտյան Ադրբեջանն ակտիվ հրետակոծություն է սկսել: Հրետակոծվել են նաեւ խաղաղ բնակավայրերը, այդ թվում՝ մայրաքաղաք Ստեփանակերտը: Ադրբեջանի հարձակման հետեւանքով Արցախում ընդհանուր առմամբ զոհվել է 11 քաղաքացի, 60-ից ավելի վիրավորվել: Ադրբեջանի ԶՈՒ-ն թիրախավորել է նաեւ ՀՀ զինվորական եւ քաղաքացիական ենթակառուցվածքները, որի արդյունքում Վարդենիսի շրջանում սպանվել է 1 քաղաքացիական անձ եւ այրվել է քաղաքացիական ավտոբուս՝ Ադրբեջանի ԶՈՒ-ին պատկանող ԱԹՍ-ի հարվածից: Հայտնաբերվել են փաստեր՝ Թուրքիայի ներգրավվածության վերաբերյալ: Սեպտեմբերի 29-ին Թուրքիայի F-16 կործանիչը ՀՀ օդային տարածքում խոցել է հայկական ռազմաօդային ուժերի ՍՈւ-25 գրոհիչը, զոհվել է օդաչուն: Հոկտեմբերի 1-ին հակառակորդը հրետանի էր կիրառել Գեղարքունիքի մարզի Շատվան գյուղի ուղղությամբ, ինչպես նաեւ հարվածային ԱԹՍ-ից հրթիռ էր արձակել Մեծ Մասրիկ բնակավայրի վրա, ինչի հետեւանքով զոհվել էր մեկ քաղաքացիական անձ, երկու քաղաքացիական անձ սպայել էր տարբեր աստիճանի վնասվածքներ: Հայկական զինուժն ունի 157 զոհ: ՀՀ-ում եւ Արցախում հայտարարվել է ռազմական դրություն եւ ընդհանուր զորահավաք: Արցախի ուղղությամբ Ադրբեջանի կողմից սանձազերծված գործողությունների արդյունքում, ճշտված տեղեկություններով, ադրբեջանական կողմն ունի մարդկային շուրջ 2290 կորուստ եւ 3600 վիրավոր: Հակառակորդը կորցրել է 113 ԱԹՍ, 13 ուղղաթիռ, 247 զրահատեխնիկա, 11 ինքնաթիռ, 1 «Սմերչ», 3 ՏՈՍ-1Ա ծանր հրանետային համակարգ:***

### ԱՆՑԿԱՑՎԵՑ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

***Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ կառավարությունում տեղի է ունեցել Անվտանգության խորհրդի արտահերթ նիստ:***

***Նիստին, բացի անվտանգության խորհրդի անդամներից, մասնակցել են նաեւ Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը, Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանը, վարչապետի աշխատակազմի ղեկավար Էդուարդ Աղաջանյանը, Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Սուրեն Պապիկյանը եւ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Հակոբ Արշակյանը:***

***Նիստի ընթացքում քննարկվել են ղարաբաղա-ադրբեջանական սահմանագոտում օպերատիվ վիճակը եւ հայկական զինված ուժերի հետագա քայլերը:***

### 500.000 ԵՎՐՈ՝ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՏՈՒԺՎՈՂ ԽԱՂԱՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ

***Լեռնային Ղարաբաղի (ԼՂ) հակամարտության գոտում ռազմական գործողությունների սկսվելուց հետո, Եվրամիությունը (ԵՄ) հայտարարում է արտակարգ մարդասիրական օգնություն հատկացնելու մասին՝ շփման գծի երկու կողմերում հակամարտության հետեւանքով տուժած ողջ քաղաքացիական բնակչությանը:***

***ԵՄ ճգնաժամային կառավարման հանձնակատար Յանեզ Լենարչիչի խոսքով, այդ միջոցներով բնակչությանը ցուցաբերվելու է բժշկական օգնություն, տրամադրվելու բժշկական սարքավորումներ, սնունդ եւ այլ անհետաձգելի պարագաներ:***

***Լենարչիչը հրապարակել է նաեւ մարդասիրական օգնություն ցուցաբերելու համար անհրաժեշտ տվյալները եւ իր հայտարարությունը՝ կապված ԼՂ-ում իրավիճակի հետ:***

CyanMagentaYellowBlack



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԶՈՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՂՈԹՔ

*Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ, հոկտեմբերի 3-ին, ժամը 18:00-ին Հայաստանի եւ սփյուռքի թեմերի բոլոր վանքերում եւ եկեղեցիներում կկատարվի զորակցության համազգային աղոթք՝ հանուն Արցախի եւ հայրենյաց պաշտպանների:*

*Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հրավիրում է բոլոր հայորդիներին իրենց առանձնական աղոթքով միանալ համազգային զորակցության արարողությանը:*

*Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում, այսօր՝ հոկտեմբերի 3-ին, ժամը 18:00-ին կբարձրացվի զորակցության աղոթք՝ հանուն Արցախի եւ հայրենյաց պաշտպանների:*

*Համազգային արարողությանը կմիանան Վիրահայոց թեմի գործող եկեղեցիները:*

***Վիրահայոց թեմի մամլո դիվան***

## ՀՈԿՏԵՄԲԵՐ



***1.10.2020 Սուրբ Սահակ եւ Համազասպ Արծրունի իշխանների հիշատակության օր***

***3.10.2020 Քրիստոսի 72 աշակերտների հիշատակության օր***

Հայ Առաքելական եկեղեցին Քրիստոսի աշակերտների հիշատակության օրը տոնում է Վարագա Խաչին հաջորդող շաբաթ օրը:

***8.10.2020 Պանդալեոն բժշկի, Երմողեա քահանայի եւ Եվպրաքսիա կույսի հիշատակության օր***

***10.10.2020 Սուրբ թարգմանիչ Վարդապետների՝ Մեսրոպի, Եղիշեի, Մովսես Քերթողի, Դավիթ Անհաղթ փիլիսոփայի, Գրիգոր Նարեկացու եւ Ներսես Կլայեցու տոն***

Սուրբ թարգմանիչ Վարդապետների տոնը հայ ժողովրդի ամենանվիրական ու սիրված ազգային-եկեղեցական տոներից է: Թարգմանիչ վարդապետների հիշատակը Հայ եկեղեցին տոնում է տարին երկու անգամ: Առաջինը կոչվում է «Տոն սրբոց թարգմանչացն մերոց Սահակայ եւ Մեսրովբայ» եւ տոնվում է Հոգեգալստյան չորրորդ կիրակիին հաջորդող հինգշաբթի օրը: Երկրորդը կոչվում է «Տոն մեր սուրբ թարգմանիչ վարդապետների՝ Սահակի եւ Մեսրոպ Մաշտոցի, եւ նրանց սուրբ աշակերտների՝ Եղիշե Պատմիչի, Մովսես Քերթողի, Դավիթ Անհաղթ փիլիսոփայի, Գրիգոր Նարեկացու եւ Ներսես Կլայեցու», որը շարժական է եւ տոնը նշվում է հոկտեմբերի 3-ից մինչեւ նոյեմբերի 7-ն ընկած ժամանակահատվածում:

ՀԵՌՈՒՍՏԱԵԹԵՐ

## «ՄԵՐ ՁԱՅՆԸ» ՀԱՂՈՐԴԱՇԱՐԻ ԹԵՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ

***Վրաստանի միջազգային հարաբերությունների ռազմավարություն (Ռոնդելի հիմնադրամ) Ազգային փոքրամասնությունների վերաբերյալ ծրագրի իրականացումը ԵԱՀԿ Գերագույն հանձնակատարի աջակցությամբ (#OSCEHCNM) իրականացնում է «Ազգային փոքրամասնությունները քաղաքական գործընթացներում. Մասնակցություն ավելի լավ ապագայի համար» նախագիծը:***




Այս նախագծի բաղկացուցիչներից է «Մեր ձայնը» հաղորդաշարի միջոցով երկրում բազմազան հասարակության ձեւավորման խնդիրների լուսաբանումը:

Սեպտեմբերի 28-ին «Կավկասիա» հեռուստաալիքով հեռարձակվեց «Մեր ձայնը» հաղորդաշարի երրորդ թողարկումը՝ նվիրված քաղաքական գործընթացներում ազգային փոքրամասնությունների ներգրավման հետ կապված խնդիրներին: Հաղորդմանը մասնակցում էին Սամցխե-Ջավախեթիի եւ Քվեմո Քարթլիի քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների եւ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ:

Իրենց ընտրատարածքներում ընտրական ծրագրի ձեւավորման գործընթացում էթնիկ փոքրամասնությունները ներկայացնող քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները քննարկեցին գործոններն ու խնդիրները, որոնք խոչընդոտում են ազգային փոքրամասնությունների ակտիվ մասնակցությունը քաղաքականությանը:

Հաղորդաշարի շրջանակներում նախատեսվում են հետեւյալ թեմաների քննարկումները. Կուսակցության ներկայացուցիչները ներկայացնում են իրենց կուսակցությունների տեսակետները՝ կապված քաղաքականության մեջ ազգային փոքրամասնությունների դերի հետ: Ինչպե՞ս է ազգային փոքրամասնությունների մասնակցությունը քաղաքականությանը արտացոլվում ընտրողների եւ մեծամասնական թեկնածուների կուսակցական ցուցակներում: Ինչպիսի՞ն է ազգային փոքրամասնությունների ներկայացուցչությունը տեղական կառույցներում: Որո՞նք են գործոններն ու խնդիրները, որոնք խոչընդոտում են ազգային փոքրամասնությունների ակտիվ մասնակցությունը քաղաքականությանը: Ինչպե՞ս նոր ընտրական համակարգը կազդի էթնիկ փոքրամասնությունների մասնակցության վրա:

## ԻՐ ԾՆՆԴՅԱՆ ՕՐԸ ՄԱՀԱՑԵԼ Է ՄԻՔԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ



Հոկտեմբերի 2-ին, իր ծննդյան օրը, 80 տարեկան հասակում, Թբիլիսիում, ծանր հիվանդությունից հետո մահացել է Վրաստանի արվեստի վաստակավոր գործիչ, Վրաստանի Պատվո շքանշանակիր եւ Հայաստանի Հանրապետության «Գրիգոր Նարեկացի» շքանշանի ասպետ, մինչեւ 1994 թվականը Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնի գլխավոր ռեժիսոր **Միքայել Կարապետի Գրիգորյանը**:

Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնը, «Վրաստան» թերթի խմբագրությունը, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Վրահայոց թեմը ցավակցում են հանգուցյալի հարազատներին ու բարեկամներին:

Քաղաքացիական հոգեհանգիստը՝ հոկտեմբերի 4-ին եւ 5-ին, ժամը 17:00-ին:

Հուղարկավորությունը՝ հոկտեմբերի 6-ին, ժամը 14:00-ին:

***Հասցեն՝ Վարկեթիլի 3, 2-րդ միկրոշրջան, 2-րդ «Բ» շենք, 6-րդ հարկ:***



Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնը, «Վրաստան» թերթի խմբագրությունը խոր վշտով տեղեկացնում են, որ կյանքի 92-րդ տարում վախճանվել է թբիլիսյան ճանաչված «Սայաթ-Նովա» համույթի հիմնադիր եւ բազմամյա ղեկավար, Վրաստանի վաստակավոր դերասան արժանահիշատակ Մուկուչ (Մկրտիչ) Ղազարյանի (1922-2010) տիկինը՝

***Կլարա (Վիկտորյա) Պարույրի ՂԱԶԱՐՅԱՆԸ***

Թատրոնի կոլեկտիվը եւ խմբագրությունը վշտակցում են Կարինե եւ Գառնիկ Ղազարյաններին՝ սիրելի մոր մահվան կապակցությամբ եւ ցավակցում հանգուցյալի հարազատներին ու մերձավորներին:

## ԽԱՉԲԱՌ



***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 2.Կենդանու բերան: 4.Կատար, ծայր: 7.Բույսերի ծաղկի սերմնարանից զարգացող գոյացություն, որի մեջ ներփակվում են սերմերը: 8.Քաղաք Ուկրաինայում: 9.Հայկական այբուբենի տառ: 10.Հեծյալ զորամաս, որ ուղարկվում էր թշնամու երկիրը՝ գերի եւ ավար բերելու: 14.«... ընկավ դռնեդուռ»: 16.Հացահատիկը դիզելու, կալսելու եւ մաքրելու տեղ: 18.Արու ձի: 22.Ինչպես: 24.Հին ռազմանավ: 25.Վրաստանի արդարադատության նախարար՝ ... Ծուլուկիանի: 26.ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության հուշարձան Մեքսիկայում՝ Չիչեն-...: 28.Արքայական: 31.Կաթնաշոռ: 34.Մարջան, բուստ: 35.Անհիմաստ: 36.Իտալիայի Կոմկուսի թերթը: 38.Բույս, որի ցողունից թել են պատրաստում: 41.Ընդունված վարվելակերպ: 44.Հունական դիցաբանության մեջ՝ մոռացության գետը ստորերկրյա աշխարհում: 45.Ամուսնու եղբայրը: 46.Պեպոյի քույրը: 48.Սննդարար հեղուկ, որն արտադրում են էգ կաթնասունների կաթնագեղձերը: 50.Աքլոր: 51.Իսպանիայի պատմական քաղաք, Համաշխարհային ժառանգություն: 52.Պարեն, մթերք: 53.Լցրու (ժող.):

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Քաղաք Հայաստանում: 2.Մագիլ, ճիրան: 3.Հեզ, հնազանդ: 4.Վարակիչ հիվանդություն: 5.Զինվորական վերարկու: 6.Կարճահասակ մարդ, գաճաճ: 11.Մարդ, որ հիանում է բարձրաշխարհիկ հասարակությամբ, ամեն կերպ նմանակում նրանց ու ձգտում հայտնվել այդ հասարակության շարքերում: 12.Ծուլություն: 13.Հանրահայտ կոմպոզիտոր, համաշխարհային դասական ... Խաչատրյան: 15.Գետ Նիդեռլանդներում: 17.Հասարակական գործիչ, գրականագետ Մանուկ ...: 19.Գրական ժանր: 20.Քիմիական տարր, օգտագործում են ապակու արտադրության, լուսանկարչության մեջ: 21.Հեղուկի փոքրագույն մասը: 23.Ցցապատ: 27.Հասարակածը եւ կենդանակերպը չորս հավասար մասերի բաժանող երկու մեծ բոլորակները: 29.Բարձրաձայն բղավել, աղաղակել: 30.Հավերժ: 32.Կարող: 33.Պարոն, տեր: 36.Թբիլիսիում ծնված հայ պատմաբան Արթուր ...: 37.Կինոյի եւ թատրոնի շվեդ ռեժիսոր ... Բերգման: 39.Գունավորել: 40.Գլխին փաթաթելու երկար նուրբ կտոր, չալմա: 42.Հայոց եկեղեցու կուսակրոն հոգեւորականության ամենացածր աստիճանի վանական: 43.Շվեդ դերասանուհի ... Գարբո: 46.Խոսքի մաս: 47.Փոքրիկ չվող թռչուն: 49.Հունգար բանաստեղծ եւ հրապարակախոս Էնդրե ...:

***Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ***

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Դարեջան: 5.Պուչինի: 8.Աղանա: 10.Վատիկան: 13.Ոսպնյակ: 16.Եռանդ: 17.Լալա: 18.Սեր: 19.Ոգի: 20.Կանտ: 23.Ավանակ: 26.Արամ: 27.Երազ: 28.Փչակ: 29.Աշնա: 32.Աստանա: 33.Կակաո: 35.Տգետ: 37.Նրա: 39.Տիգրան: 42.Թինաթին: 44.Արենի: 45.Ռե: 47.Ալ: 48.Ռա: 50.Խուց: 53.Ուրան: 55.Լիոն: 56.Շտապ: 57.Ռեհան: 59.Անգոլա: 60.Արտաշատ: 61.Չիր:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Դավիթ: 2.Ջակարտա: 3.Աղան: 4.Նանդու: 5.Պառլո: 6.Չապլին: 7.Նոյ: 9.Ականեմիա: 11.Տեսադաշտ: 12.Իռեն: 14.Սագ: 15.Նա: 19.Զոր: 21.Աննկատ: 22.Չերազ: 24.Վաչագան: 25.Կրակ: 26.Առակ: 28.Փնտրել: 30.Շանթ: 31.Նորից: 34.Ակնախոռոչ: 36.Ենի: 38.Աճ: 40.Իա: 41.Գրանտ: 43.Թրուայա: 46.Եր: 49.Ալինա: 51.Ունելի: 52.Մոնրո: 54.Աշոտ: 58.Հար:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445